

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնում (այսուհետ՝ Բաժին) փորձագետ ներգրավելու մասին

#### Աշխատանքի համառոտ նկարագիրը

1) մասնակցում է ֆինանսական, հարկային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվությունների կազմման և դրանք համապատասխան մարմիններին ներկայացնելու աշխատանքներին,

2) մասնակցում է գանձապետական համակարգի միջոցով գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների տարբեր ծրագրերով ֆինանսավորման իրականացմանը,

3) իրականացնում է գիտական կազմակերպությունների ամսական, եռամսյակային և տարեկան կտրվածքով ֆինանսական հաշվետվությունների ընդունման և հանձնման աշխատանքները,

4) մասնակցում է բազային, գիտական նպատակային և գիտական դրամաշնորհային ամենամյա և ամենամյա ֆինանսավորման աշխատանքներին՝ հայտերի ընդունում, պայմանագրերի հետ համեմատում, ֆինանսավորման իրականացում,

5) իրականացնում է ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգով Կոմիտեի աշխատակիցներին սոցիալական փաթեթների տրամադրման գործընթացի հետ կապված աշխատանքները,

6) իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարի 10.08.2021թ. N 422-Ա հրամանով նախատեսված պետական բյուջեով իրականացվող դրամաշնորհային հատկացումների հետ կապված աշխատանքները:

#### Փորձագետին ներկայացվող պահանջները

1. Բարձրագույն կրթություն,
2. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
3. Clienttreasury ծրագրով աշխատելու հմտություններ,
4. Հարկային օրենսդրության, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքների և հարակից իրավական ակտերի, պարզևավճարներին, պատվովճարներին առնչվող իրավական ակտերի տիրապետում:

#### Փորձագետ ներգրավելու ժամկետը և աշխատավարձի չափը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

Փորձագետի ամսական աշխատավարձը կազմում է 143.000 (մեկ հարյուր քառասուններեք հազար) ՀՀ դրամ:

## **Փորձագետի պարտականությունները**

- 1) բարեխղճորեն կատարել ստանձնած աշխատանքները,
- 2) սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել կատարված աշխատանքների մասին ամփոփ հաշվետվություն,
- 3) պահպանել Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,
- 4) պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,
- 5) իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

## **Ներկայացվող փաստաթղթերի ցանկը**

1. դիմում ([ձևը](#)),
2. անձնագիր (ՀԾ համարանիշ),
3. դիպլոմ (դիպլոմներ),
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ,
5. զինվորական գրքույկ (առկայության դեպքում),
6. հայտարարություն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների բացակայության մասին ([ձևը](#)),
7. ինքնակենսագրություն,
8. այլ փաստաթղթեր:

## **Փորձագետի ընտրությունը կատարվելու է ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում:**

Փաստաթղթերը ներկայացվում են անձամբ (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 703 սենյակ, Անձնակազմի կառավարման բաժին, հեռ. 010.21-01-40-107) յուրաքանչյուր օր ժամը 09:30-ից մինչև 12:30 կամ [hr@scs.am](mailto:hr@scs.am) էլեկտրոնային փոստի հասցեին:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2021 թվականի նոյեմբերի 4-ը: